

լով ի հաւատս աստուածսպաշտութեան եւ յոմանց մեռանին. զի զորս գլխատեն, զորս այրեն, եւ զայլս այլ իմն չարչարանօք հալածեն կամ սպանանեն. զոր նորա ուրախութեամբ յանձն առնուն:

Եւ ազգ մի այլ հարեղայք կան, որ Յորդորիչք անուանին. նորա շրջին ի գեղս, յազարակս եւ ի փողոցս. եւ գտեալ զհիւանդս կամ տկարս, պէտ առնեն եւ դարման տան եւ յորդորեն շուսահատիլ, այլ գոհանալ վասն ամենայնի, խոստովանիլ եւ հաղորդիլ եւ այնպէս յուսով, սիրով եւ հաւատով գնալ առ Աստուած:

Եւ ասին մեզ, թէ յիսուն ազգ կարգաւոր կայ. եւ ամէն ազգ ցեղ մի զգեստով են եւ ցեղ մի գունով. ոմանք չուխայ ագանին սեւ, այլք սպիտակ. ոմանք շալ սեւ ներքեւն եւ վերեւն սպիտակ. ոմանց վերեւն սեւ, ներքեւն սպիտակ. եւ այլք այլ իմն, բազմազիմի եւ գանազան: Եւ այլքն ի յուսս չուխէ խաչս ունին՝ այլ եւ այլ գունով, ոմն կարմիր, ոմն սպիտակ. եւ այլքն խաչ ի ձեռս ունին եւ շրջին. եւ այլքն այլ եւ այլ գտակ. ոմանք ազգ եւ ազգ փիլոն եւ եախայս ունին: Եւ ամէն ազգ կրօնաւորի եւ կարգաւորի գլուխ եւ մեծն ի Հոռոմ է: Եւ Փափն առաքէ զորս կամի այլ եւ այլ դաւառս եւ երեք տարին փոխէ: Որպէս եւ Տաճրիկքն ունին սակաւ սոցա նման